# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 24-Ա

<< 29>> նոյեմբերի 2019թվականի

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ի ենթակետով համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ընդունել ի գիտություն Սևքար համայնքի ղեկավարի հաղորդումը 2019թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

| Կողմ( 4) | | դեմ( 0) | ձեռնպահ( 0) |
|---|---|---|---|
| Բաղինյան | Կարեն | | |
| Երիցյան | Վարդան | | |
| Հովսեփյան | Պարույր | | |
| Ծովանյան | Կարեն | | |

Համայնքապետ Թ.Թելոյան

Հավելված

Սևքար համայնքի ավագանու

2019թվականի նոյեմբերի 29-ի թիվ 7

նիստի N 24-Ա որոշման

ՀՀ Տավուշի մարզի Սևքար համայնքի 2019թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտները և ծախսերը

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | |
|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ կազմակերպություններից | | 23400 |
| 2 | Գույքահարկ անհատ ձեռն. և քաղաքացիներից | | 4141000 |
| 3 | Հողի վարձավճար | | 511000 |
| 4 | Հողի հարկ | | 4548400 |
| 5 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | 79200 |
| 6 | Տեղական տուրքեր | | 261000 |
| 7 | Տեղական վճար | | 1452600 |
| 8 | Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ | | 29019800 |
| | Ընդամենը եկամուտներ | | 40036400 |
| | ԾԱԽՍԵՐ | | |
| 1 | 4111 | Աշխատավարձ | 13505100 |
| 2 | 4112 | Պարգևատրում | 520000 |
| 3 | 4212 | Էներգետիկ ծառայություն | 1048200 |
| 4 | 4214 | Կապի ծառայություն | 161500 |
| 5 | 4232 | Համակարգչային ծառայություն | 35000 |
| 6 | 4234 | Տեղեկատվական ծառայություն | 26200 |
| 7 | 4241 | Մասնագիտական ծառայություն | 113000 |
| 8 | 4239 | Ընդհ.բնույթի այլ ծառայություն | 417200 |
| 9 | 4252 | Մեքեն. և սարքավորումների ընդ. ծառայութ. | 19000 |
| 10 | 4261 | Գրասենյակային նյութեր | 184100 |
| 11 | 4264 | Տրանսպորտային նյութեր | 619600 |
| 12 | 4269 | Հատուկ նպատակային նյութեր | 339000 |
| 13 | 4237 | Ներկայացուցչական ծախսեր | 107100 |
| 14 | 4819 | Նվիրատվություն և այլ շահույթ չհետապնդող | 360000 |
| 15 | 4511 | Նախադպրոցական կրթություն | 10872900 |
| 16 | 4729 | Սոցիալակն պաշտպանություն | 380000 |
| 17 | 4727 | Սոցիալական պաշտպանություն | 180000 |
| 18 | 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 1584300 |
| 19 | 5122 | Վարչական սարքավորումներ | 1080000 |
| 20 | 5134 | Նախագծահետազոտակն ծախսեր | 1919300 |
| | | ընդամեը | 47370100 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 25-Ն

<< 29>> նոյեմբերի 2019թվականի

## ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 18-րդ և 19-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Սևքար համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափեր՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ ոչ հիմնական շինարարության, (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական շենքերի և շինությունների համար՝

1)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային ) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բ/սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝30000 դրամ.

- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000 դրամ

-1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000դրամ.

-3000-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000դրամ:

գ/ ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3000 դրամ.

-20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի ) թույլտվության համար չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ 3000 դրամ:

3.Համայնքի վարչական տաածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝5000դրամ :

4.Համայնքի վարչական տարածքում տեղական տուրք սահմանել՝

1)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող և ոչ հիմնական հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ.

5.Համայնքի տարածքում՝

1)հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների, վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանամերձ համայնքում սահմանել 20000դրամ.

2)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել, յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար;

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

7.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար 10000դրամ:

8.Տեղական վճարների դրույքաչափերը՝

1)համայնքի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեղնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ.

2)ՏԻՄ-ի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ.

3)ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի

փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 5000 դրամ:

9.Համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ 3500դրամ:

10.Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար

- համայնքում փաստացի բնակվող բնակիչների աղբի համար յուրաքանչյուր անձի հաշվով ամսական՝ 50դրամ:

-առևտրի/այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար՝ 1քմ 35դրամ:

-հյուրանոցներ և հյուրանոցային ծառայությունների համար՝ 1քմ 15դրամ:

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝ 1քմ 6դրամ:

-կրթական,մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար՝ 1քմ 3 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ( 4) դեմ( 0) ձեռնպահ( 0)

Բագինյան Կարեն

Երիցյան Վարդան

Հովսեփյան Պարույր

Ծովանյան Կարեն

Համայնքապետ Թ.Թելոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 26-Ն

<< 29>> նոյեմբերի 2019թվականի

## ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը բյուջեում կատարել համապատասխան հոդվածային փոփոխություններ, համայնքի պահուստային ֆոնդի 11-01-02-51 հատվածի 4891 հոդվածից կրճատել 385000դրամ և ավելացնել 01-01-01-51 հատվածի 4269 հոդվածին 300000 դրամ, 4261 հոդվածին 35000դրամ, 4214 հոդվածին 50000դրամ, 04-05-01-51 հատվածի 4251 հոդվածից կրճատել 100000դրամ և ավելացնել 06-03-01-51 հատվածի 4251 հոդվածին, 05-01-01-51 հատվածի 4213 հոդվածից 600000դրամ,06-04-01-51 հատվածի 4269 հոդվածից 370000դրամ, 01-01-01-51 հատվածի 4251 հոդվածից 700000դրամ կրճատել և կրճատված 1670000դրամը ավելացնել բյուջեի պահուստային ֆոնդի 11-01-02-51 հատվածի 4891 հոդվածին, պահուստային ֆոնդից 1670000դրամ հատկացնել ֆոնդային բյուջեի 06-03-01-51 հատվածի 5113 հոդվածին համայնքում աշխատանքները իրականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ( 4) դեմ( 0) ձեռնպահ( 0)

Բազինյան Կարեն

Երիցյան Վարդան

Հովսեփյան Պարույր

Ծովանյան Կարեն

Համայնքապետ Թ.Թելոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 27-Ա

<< 29>> նոյեմբերի 2019թվականի

**ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023 թթ. ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ինչպես նաև Սևքար համայնքի հետ համատեղ՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության աջակցությամբ նախաձեռնել է համայնքի 2019-2023 թթ. համալիր զարգացման ծրագիրը:

Ծրագիրը ձևավորվել է բնակավայրի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա ներուժային հնարավորությունների (բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում: Այն համայնքի զարգացմանն ուղղված փաստաթուղթ է, որը հիմք է հանդիսանալու տեղական կառավարման բոլոր մակարդակներում համապատասխան քաղաքականության իրականացման համար:

Ծրագրի գաղափարախոսությունը համահունչ է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին և թիրախներին, ՀՀ կայուն զարգացման ծրագրին, Հայաստան- ՄԱԿ Զարգացման աջակցության 2016-2020թթ ծրագրին, ՀՀ կառավարության կողմից ընդունված 2019-2021թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրին, ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարությանը,ՀՀ Տավուշի մարզի 2017–2025թթ տարածքային զարգացման ռազմավարությանը:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Սևքար համայնքի 2019-2023 թթ. համալիր զարգացման ծրագիրը:

2. Առաջարկել Սևքար համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել ծրագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Կողմ( 4) դեմ( 0) ձեռնպահ( 0)

Բագինյան Կարեն

Երիցյան Վարդան

Հովսեփյան Պարույր

Ծովանյան Կարեն

Համայնքապետ Թ.Թելոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 28-Ա

<< 29>> նոյեմբերի 2019թվականի

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողատեսքերից 0.01552հա /ծածկագիր 11-058-0049-0003/ վարձակալության իրավունքով տրամադրելու համար մրցույթ հայտարարելու մասին.*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին*

## ՈՐՈՇՈՒՄ Է

*1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողերից 0.01552հա /ծածկագիր 11-058-0049-0003/ վարձակալության իրավունքով տրամադրելու համար մրցույթ հայտարարելու՝ տասը տարի ժամկետով տարեկան 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով:*

*2.Վարձակալության իրավունքով տրամադրելու համար մրցույթ հայտարարելու մասին օրենքով սահմանված կարգով տալ հայտարարություն:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

| Կողմ( 4) | դեմ( 0) | ձեռնպահ( 0) |
|---|---|---|

Բազինյան Կարեն

Երիցյան Վարդան

Հովսեփյան Պարույր

Ծովանյան Կարեն

Համայնքապետ Թ.Թելոյան